

ՄԵՐԴԵՐ

ՄԵՐԴԵՐ

7



«ՊՐՈԼԵՏԱՐ»-ի
ԳՐԱԴԱՐԱՆ

卷之三

七言律詩

Արմ.

2-33242

ԳՐԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՌԱՅԻՐԸ

№7

ՊՐՈԼԵՏԱՐԻ

ԳԵՂԱՐԿԵԱՏԱԿԱՆ ԳԱՂԱՐԱԿԱՆ
ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԱՐԴԱՐ

ՄԵՐՃՈՒՄ



10066

ՀՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻ ՕՐԵՐԻ ԴՐԱ

ԲԻԼԱՏՈՒ

1935

Պատ. իմք.՝ ԱԴ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Թողարկել Ս. ԴՐԱՄԱԹԵՐԱՆ



Տպ. ՇՀԱՐԺԱ ՎԵՐԱԿԱՆՆԵՐԻ Ա. Ֆ. Մ. ՄԱԽԱՆԻԿՈՎԻ անդամ

Պատվել 204 թ. Գլուխիս 14036. Պահակ 2000

ՄԵՐՃՈՒՄ

ՊԵՏԱԿԱՆ

1

Կոսջ ամենորյա նախառինքներից ազատվելու համար Դագարը վճռեց ճանապարհ ընկնել:

Այս որից, յերբ նրանք ստացան կուպոյի վերջին նամակը, առան անդորրությունը խանդարվեց:

Աղեսայից մինչև Թիֆլիս յերկու ամսվա ընթացքում յեկած այդ՝ մատիտով գրած, տեղ-տեղ տողերը յեղծված նամակը պարձավ ճակատամարտն սկսելու պահերազմական շեփոր: Թանի գնում կոփվը բորբոքվում եր: Եվան կրակ եր կտրել. ել հանդիսատ չեր տացիս ամուսնուն:

— Չուլամիշ ես յեղել, առնը զեր ընկել քեզ համար, զարձել եմ զլխիս ինվալիդ, ել չես միտք անում, ին քորփեն ինչ յեզավ: Փորձանքի մեջ ընկավ, հիգանդացանգի մոք դիտե հիմի վարանդ ե. ինչ ե անում: Ետրելի յե մի խռախոլի կամ ուրիայի քած զլուխը կը-ողավ, խելքն առավ ու մեզ մտահան անել տվից: Առանց են ել ինվալիդ ես, եղուց ելոր ձեռ ու վատից ընկնես ինչ կլինի մեր հալը: Մի ասեղով յերեք վորքին վանց ենք պահելու:

Այս եր ամեն որվա հերթական զեկուցումը, վոր առաջուա-իրիկուն կարգում եր Եվան ամուսնու զլխին:

Կապլոն Հաղարի յերկու վորդիներից կը տսերն երբ ։ Հաղարը փոքր հասակից դարձնի մոտ աշկերտ լինելով, յերբ մեծացավ, առանձին արհեստանոց բաց արավ իր վարպետի արհեստանոցի կողքին, Մհտեխի դիմաց և շարունակեց դարբնությունը։ Զավակներին փոքրուց աարավ արհեստանոց, բայց մեծ վորդին՝ Ակորը չսիրեց մուրճն ու գնդանը. դուրս յեկայի, միժամանակ պարապ թափառեց, ապա ընկալ մի խումբ հասակակից ավարա զումարբազների շրջան. և վորովհետեւ բավականին լավ ձայն ուներ, մտալ թիղղեհեմիտիրացու, Թիֆլիսում հայտնի «Յաչալ Տիգրանի» խմբի մեջ, ու մեռելների վրա յերգելով մի քանի կոտեկի փոքր եր վաստակում ու քելեխի գնում։ Ապա դարձալ տիրացու, ամուսնացավ, հորից բաժանվեց ու իր համար առանձին տուն դրեց։

Կապլոն, ընդհակառակը, սիրում էր դարբնությունը. մինչև 20 տարեկան հասակը հոր հետ դարբնություն եր անում, բայց ամուսնանալուց հետո տեսնելով, վոր ապրուասը դժվարանում ե, թողեց հոր արհեստանոցը և իր ընկեր Սիկոյի ողնությամբ, վոր քանում եր Թիֆլիսի յերկաթուղային մեծ արհեստանոցում, մտավ արհեստանոցի դարբնոցը և դարձավ բանվոր։

1914 թվին Սիկոյին ու Կապլոյին կանչեցին իրեն պահեստի ղինվորներ, յերկուսին ել ուզարկեցին արհեմտյան ֆրոնտը—դերմանացիների ու ավստրիացիների դեմ կռվելու Զօրս ամսից հետո Սիկոն վերադարձավ աշ կուրծքը գնդակով ծակված, իսկ Կապլոն մնաց պատերազմի դաշտում։

Ղաղարը լսում եր լուռ, սկզբի որերին վոչինչ
չեր պատասխանում: Ստամոքսում տյրոց զգացող մար-
դու նման կուչ եր գալիս, ու փոս ընկած, մարած աշ-
քերը նոսր շեկ հոնքերի տակից դարձնում եր դեպի
դուան մոտի անկյունը ու աժֆա անում: Չեր հականա-
ռում, վորովհետեւ կնոջ առաջարկը նրան թվում եր տ-
նիրագործելի ցնորք: Վերտեղ և Աղեսան... սարերի
ու ծովերի յետելը. սև ծովից են կողմը. գնալը հմշտ ե.
ճանապարհի ծախսը վերտեղից և գտնելու: Կամ զնա
ել՝ Բնչ պիտի անի, Ռով զիտե, վորդին հիմտ Աղե-
սայումն ե, թե ուրիշ տեղ և գնացել: Վերջին նամակը
յերեք տարի առաջ եր ստացվել. եղ յերեք տարվա
մեջ ինչեր եյին պատահել, քանի, քանի կորիլսեր
եյին յեղել. Բնչպիտի լուրեր եյին յեկել եղ կողմերիցը:
Հիմտ Աղեսան մւմ ձեռին ե, կամ Կապլոն հիմտ են-
տեղ ե, թե ուրիշ տեղ և գնացել: Խնքը պողպատէ
չաքմա ու յերկաթե գավազան առած՝ հեքիաթի մար-
դու նման աշխարհի վեր ծերը պիտի ընկնի ման դա,
նրան գտնելու համար: Շատ անգամ ել վիզը ծոսծ
լուր ժպառում եր, փոքրիկ Կոլիայի միշտ խանավ քիթը
հաստ ու կոշտ ունելիքի նման մատների մեջ առած,
սեղմում եր ու քսում շալվարին:

Բայց քանի կնոջ փաստերը շատանում եյին,
ապրուստն ել անտանելի յեր դառնում, գնալու միտքը
Ղաղարի համար հետզնետե կարծես խելքի մոտ եր յե-
րեռում:

Այդ որից, ահա Ղաղարն սկսեց ինքնապաշտպա-
նության դիրք բռնել և կնոջ հետ վեճի մտնել:

— «Գնա, գնա...» Ախր մւր գնամ, այ կնիկ-
իսկի մտածում ես ասածներիդ վրա: Աշխարհը խոռ-

Նըսիել և իրար. մենչեւիկ ու դաշնակի, մըստավաթ ու հաղար միլլաթ զլուխ են բարձրացրել, իրար քրօրում մն, աշխարհը արյունի ծով են դարձրել: Ենտեղ, Ռուսաստան ինսպիրոն ու ֆրանցուզը ռուս զորքի հետ դոշի են տալիս, յերկիրը բարութանդ անում, իրար ձեռից խումմ ու մեկը մնին ջնջում:

Մարգու հականառությունը Եվային նոր յեռանդ ներշնչեց: Խնչպես բարկ հնացի մեջ մի կաթսա ջուր շուռ տառ՝ թշա, զոլորչի բարձրացնի ու կրակն ավելիի բորբոքի, այդպիս յեղավ: Կինը կատաղեց, կարծես այդ աղքանչանին եր սպասում: Նրա հողնած, նվազած լիգուն կապանքները բաց արավ, ու Եվան քարե կարեւուտ տեղաց ամուսնու դիմին:

— Դե տառ՝ վախում եմ, ելի. թամբալ մարդու խոսց եւ, շաշխարհը խառնվել ե իրարու: Խառնվել ե՝ խառնվի: Դու ել աշխարհի մի մասը, զու ել խառնվի: Թե չե, փախել ես տուն, ծակը մտել, քաղցած վորբերին սուտ զուրպաւում ես ու դատարկ խոսքերդ կանքեաի տեղ թագաղա անում: Լորի ել չկա, թե պղնձի մեջ լցնեմ: Պործի ել չկա, թե պղինձը կրակին զնեմ: Մարդ ես, զգակ ունես դիմիդ: զուրս ընկի, զնա, վորդուղ զաբ: Թե չգտար, զու ել հետք կորի: Մեկ ե, մերիդդ եստեղ զցես, թաղմելիք ել չունենք. տանը նստած Բ'նչ ոգուտ ես տալիս:

Աւ քանի զնում՝ կոխվը բորբոքվում եր: Շատ անգամ Ղաղարը տանից զուրս եր փախչում, զնում ուսիրիչի խանութը, կամ խանչալսաղ Արտեմի դուրանը, ժամերավ նստած համ նորությաւններ հազարեւու, համ կնկտ նախատինքներից աղատվելու համար:

Դասպլոն տանը թողել եր արդեն ծերացող հորը, պատավ մորը, հղի կնոջը՝ Հայկանին և յերեք փոքրիկ դավակներին՝ Մանուչին, Ժորիկին ու Կոլային, — զորոնցից մեծը յերեք ու կես տարեկան եր, իսկ վոռքը մի տարեկան:

Դասպլոյի դնալու յերբորց որը Հայկանը սկսուցից իտպուն դնաց Պակաւերկա։ Մանանի մոտ, ինչ վար դեղ որոկել առից և չըստ որ ձանր տանջանքներ կրնաց հետո գերեզման իջավ։

Դադարի զարձը շատ զմվարացավ։ Աքնեստանոցը լավ չեր քանում, ինքն ուժից ընկնում եր, անտեսությունը քայլայվում։ Մյուս կողմից կյանքն սկսում եր տատիճանաբար զդալի կերպով թանդանալ։ Կառավարվել չեր լինում։

Եվան իրենց հարեան կապալառու Գարոյից սկսեց զինվորների սպիտակեղեն վերցնել կարելու։ Գարոն ինտենդանտական վարչությունից վերցնում եր մեծ քանակությամբ կոսորեղնն, ձեռում եր և եժան զնով կարել եր տալիս աղքատ կանանց — շապիկն ու վարտիկը միասին 9 կոպեկավ, շատիկը 5, իսկ վարտիկը 4 կոպեկ հաշվելով։

Արգեն տասը կար անող ուներ Գարոն, յերբ եպահն զիսեց նրա կնոջը և խնդրեց, վար ամուսնուն ասի։ Իրեն ել պատվերներ տա Գարոն զմվարությամբ եր համաձայնում, բայց վերջը բազմալով նրան, զիջեց և զոյզին մեկ կոպեկ պակասեցնելով, Եվային ել աշխատանք ամից, նրան ովիրավորած չլինելու համար մյուս կարանողների վարձից ել մեկական կոպեկ կը բնատելով։

1918 թվին, յերբ լուր տարածվեց, վոր Թուրքական բանակը արշավում և Թիֆլիսի վրա, քաղաքում սարսափ ընկավ։ Շատերն սկսեցին ծախծինել անային կահ-կարասին ու փախչել Հյուսիսային Կովկաս։ Գաղոն 12 հազար ռուբլիով մի ֆուրգոն առավ իր սարքով ու և ձիով, ընտանիքը լցրեց մեջն ու ճանապարհ-վեց Վլադիկավկաս։

Ղազարը ևս մտածում եր փախչել, բայց տեսնելով, վոր անհնարին և փոքրիկ թոռների հետ վոտով անցնել 200 կիլոմետր ճանապարհը, իրեն հանձնեց բախտին ու մնաց քաղաքում։

Այդ փոթորիկն անցավ, քաղաքին վտանգ չպատահեց, բայց ապրուստը չափից դուրս դժվարացավ։

Ղազարի գործն ավելի վատացավ, յերբ Անդրկովկասը բաժանվեց Խորհրդային Ռուսաստանից և Վրաստանում հիմնվեց մենշեկիների կառավարությունը։

Գաղոն արդեն վերադարձել եր Վլադիկավկազից, իր գործը շարունակում եր պատվերներ վերցնելով նոր կառավարությունից, բայց կար անողների մինակը չափից դուրս դժվարացավ, վորովինետև աշխատավարձը նա ավելացնում եր կոպեկ-կոպեկ, իսկ դրամի արժեքն ընկնում եր մանեթ-մանեթ։

Ղազարն արհեստանոցը փակեց, չնչին գնով ծախելով սարքն ու գործիքները, մնաց անգործ, նստեց տանը վորքերին խնամելու։ Արհեստանոցից տուն ըերած մի քանի մանր-մունք գործիքներ, գործիքների մասեր, մեխ, պայտ, կողպեք և այլն կիրակի որերը նա տոնում եր «Յարմրկա»։ Ապատահում եր, վոր մի քանի կոպեկ տուն եր բերում։ Իսկ նվան պիշեր-ցերեկ կարում եր, բայց ստացած արդյունքով ճադի հաց

ել չեյին կարողանում դնել։ Ակսեցին տան իրեզենները ծախել չեշին դներով։ Նետդնետե ծախծինցին կամոգը, մահակալը, թախտը, աթոռները, պղնձեղենը և առմովարը։ Ել տանը բան չմնաց ծախելու։

— Բե վոր եարես զնա,—ասում եր եվան,—ուրիշ բան չի մնում մեղ անելու։ պիտի վերցնենք հսկատներին, զնանք Թուոր լցվենք, քանի վոր ահաբառություն ել չենք կարող անել։ Զեոդ պարզես՝ ուժից ուզես, սոդ խալիսք Թուոր թափովելու յե զառեւ աղքատների թիվը անհամար ու անհաջուվ։

Դադարն աշխատում եր հուսադրել նրան, թե

— Համբերի, եսպես հո չի մնա, կապլոն հալբալի կդա. ես մենչեիներն ել հո հովիսյան չեն մնալու, որտեսք հո կառավարություն չեն, թալանչի յես։ Հալրոբ եզրցելոր ելի Ռուսաստանը կդա, ճամբերը կը բացվեն, յերկիրը լիություն կընենի։

— Այ, առավիր դնեմ յես մենչեիկներին հա,—ասում եր եվան։ — Նիկալային թախտիցը դցեցին, թե կոիվը վերջանաւ, ժողովուրդը զունչ բաշի, ժողովրդի որը խավարացրին, կոիվն ել չվերջացավ ու նիկալայի աեղ հազար Նիկալայ նստեց զլմներիս Ռուր ե, թողրալշեիկը դա, ելի։ Սիկոն ասում ե՝ Ռուսաստանը հիմի բաշեիկների ձեսին ե, թոդ դան ելի, մի ես տանջանքներից ու ճաղուցը ազատվենք։

Ապա զառնում եր մարդուն նախասելով, թե խսուրը կտուրն ե զցում մենչեիկի ու Նիկալայի մսսին խսելով։

— Դու մի կոզմը զիր եզ նազլները. կրեմ Նիկալայի զլուխն ել, մենչեիկինն ել հետք. դու զնմէ, վոր-

դուռ գտի. թե վոր նըանից ել մեր հույսը կտրվեց,
ինձ ու քեզ մի թոկ ե պետք. երեխեքին՝ Քուռը...

Ել անկարելի յեղավ դիմանալ Դիշեր ու ցերեկ
մինույն խոսքը լսելով «Գնա, զնա, Ղազարը վճռեց.

— Ինչ ուզում ե լինի, կզնամ: Յերկաթը վոր
կարմրեց քուրում, պիտի քաշես դուրս, թե չե՞ կհալ-
վի: Ինչպես յերևում ե՝ մեր յերկաթը կարմրել ե...
կզնամ, կամ մի լուր կրերեմ, կամ կսպանվեմ: Հո քո
ձեռից կազատվեմ այ դժոխքի փուքս... Ասաց Ղազարը
դառնացած ու սկսեց մտքում ծանր ու թեթև անել
գնալու հանգամանքները:

Քանի Ղազարը վիճում ու հականառում եր, այն-
քան նվան կատաղում ու պնդում եր, վոր նա դնա-
բայց հենց վոր Ղազարը հայտնեց, թե ուզում ե գնալ,
նվայի մեջ մի փսփոխություն յեղավ. կարծես նրա
սրտից մի բան կտրվեց ու ընկափ: Նա լնդուն փորը
գցեց ու դադարեց Ղազարի գնալու մասին խոսելուց:
Մի տեսակ խոճանարություն եր զդում, այնպես, ինչ-
պես մարդ կզգա, յերբ մեկին հանկարծ հանաքով ըս-
թելիս զցի հնոցի բոցերի մեջ: Իսկ յերբ Ղազարը
խոսք եր բաց տնում գնուլու մասին, նվան ասում եր.

— Տեսնես ճամբեքն ինչպես են, ասում են՝ ճամ-
բեքը կապ են. դաղախները մարդիկ են մորթոսում,
դաշաղները թալանում են: Ասում են՝ ծովի վրա վը-
տանդ ե, նավերը չեն բանում, նավների վրա յել մարդ-
կանց թալանում, ծովին են զցում:

Իսկ Ղազարը հերքում եր այդ լուրերը, ասելով.

— Պարագ մարդու խոսքեր են, պառավ կնկա-
զրույցներ. վոչինչ ել չկա: Ինձ ինչ պիտի անեն, հա-
բուստ չեմ՝ թալանեն, ջահել չեմ՝ սպանեն:

Յեզ այսպիս դերերը փոխած մի քանի որ վլհնեցին, մինչև վոր Դաղարի դիրքն ամրացավ մի նոր փառառով։ Այդ որերը Նոր-Նախիջևանից Դաղարին ժանոթ մի զինվաճառ եր լեկել, վոր հայտնեց, թե կապը լու Ռուսովի կողմերում ե. ինքը նրան յերկու անգամ տեսել և Սաղավայա փողոցում զինվորների հետ շարքով անցնելիս։ Նետը խոսել չի աչռղիել, չդիտել թե արզուք, հիմա ել այնտեղ ե, թէ վոչ, բայց հաստատ զիտե, վոր այդ կողմերում ե. Դաղարն ուրախացավ. ել զանդաղելու կարիք չկար։ Նա զինեվաճառի խորհրդով վճռեց ճանապարհ ընկնել Ռուսով, Նովոսահյուկի վրայով, վորովհետեւ ինչպես ասել եր նա, Վաղիկովկազի կողմերում թունդ կռիվներ են, ու դըժմար և անցնել։

Ամենից զժվար բանը ճանապարհածախսի խընդիրն եր Դրա հնարն ել գտանու Ամեն ինչ ծախելուց հետո առնը մնացել եր Հայկանի կարի մեքնան, վոր կապլոյի նվիրն եր իր կնկան ամուսնանալիս։ Այդ մեքինան չեյին ծախել, վորովհետեւ տղայի ու հարսի հիշատեկն եր, բայց զիտավորն այն եր, վոր նվան նըրանով եր կար անում։ Այդ մեքնան և Կապլոյի սըրճագույն դարիբարդին, վար զորակոչի գնալուց քիչ առաջ Դաղլոն կարել եր տվել և կիրակի որերը ծածկում եր, ծախեցին Դարոյին վրացական բռներով, վորի զիմոց Գարոն տվեց քառասուն ու քսան ուռելիտնոց և կերենկաներ։ կուրսի մեջ թեթև խարելով։

Դաղարը քրանելով ու առնջվելով մի կերպ իրեն զցեց Փոթի զնացող զնացքի վաղոնը ու ճանապարհուց. իսկ նվան Մանուշի հետ մորիկի ձեռքից ըռնած աչքերը սրբելով տուն զարձագ, պահելու յերեք վորքերին, մինչև Դաղարը կդառնար ու լուր կըերեր։

III

Այդ որից անցել եր վեց ամիս և ուստա Ղաղաբից վոչ մի լուր չկար: Եվան մտատանջության մեջ եր ընկելի վոչ միայն մտատանջվում եր, այլև խղճահարվում:

Ինքն իրեն նախատում եր, թէ ինչու պատճառ յեղավ ամուսնու գնալուն: Ինքը պարզ, աշկարա մարդուն ուղարկեց մահվան դուռը: Յեվ իսկապես, ինչ ոգուտ ամուսնու գնալուց: Գնաց տանջվեց, գուցե և սպանվեց, առանց տղից մի լուր բերելու. իսկ ինքը զրկվեց իր ընկերից:

Այժմ, յերբ Ղաղարն այլնս չկար, նոր եր գպում եվան, թե ինչքան անհրաժեշտ եր նրա ներկայությունը: Ու աեկ-մեկ հիջում եր ու մաքում հաշվում նրա արածներն ու աված ոգուտները, յերբ տանն եր.— Կիրակի որերը գնում եր «յարմբրկա», մի քանի շանի վաստակած տուն եր զալիս. առավոտները գնում եր «ծղարու»-ից ջուր եր բերում, մինչև ինքը տունը կը սրբեր. Փոքրիկ կոլային ծնկներին նստեցրած խաղացնում եր, յերկար բեխները նրա ձեռքը տառով. կամ գիշերները, յերբ յերեխաները քաղցից չեյին ուղում անկողին մտներ, անուշ խոսքերով խարում եր, շորերը հանում և հեքիաթ ասելով կամ ճնանա նանա, պրանգուլ՝ յերգելով քնացնում եր: Իսկ յերբ ինքը գնում եր կարը տանելու կամ նոր կար բերելու, կամ գնում եր բաղար մի բան ճարելու, Ղաղարը տանը նստած պահում եր յերեխաներին, ու Մանուշի հետ տունը սրբում կամ բակն եր ավլում: Գարոյից ստացած կարի վարձը միշտ Ղաղարն եր հաշվում և քանի, քանի անգամ բռնել եր Գաբոյի «սխալը», և ինքը պակասը

պահանջել եր: Իսկ հիմա ոտիզված Մանուշին եր հաշվել տալիս, վոր այնքան ել վստանելի հաշվապահ չեր, ինչքան Դաղարը: Խնդն ել դարդութած ժամանակ հեռը զրոյց եր անում, իսկ սիրտն ելած վախտը հետը եռվում եր՝ սիրոք դատարկում:

Բայց որդ բոլորը վոչինչ. հիմա Դաղարի ներկայաթյունը հարկավոր եր մի օւրիշ կողմից: Եվան վերջին ժամանակները ապրուատի մի օւրիշ ճանապարհ եր դաել: Հարեան կանանցից սրա կամ նրա հետ զնում եր Գորու ու Սուրամի կողմերը, նույնիսկ Սամարեզի ու Բակուրիանի. հին ու մին շորեր տանից կամ ուրիշներից վերցնելով, տանում, փոխանակում եր դանաղան մթերքների հետ: Բերում եր սիմինդ, լորի, ձու, հավ, յուղ, պանիր կամ մբղեղեն. մի մասը տալու եր շորերի տիրոջը, մի մասը պահում եր իրեն: Այս ձեռվ կարողանում եր նաև տան պաշարը ապահովել, բայց ոտիզված եր լինում յերկու-յերեք որով բացակայել տանից, յերեխաներին թաղնելով մենակ ու շարունակ մատանջվելով. թե արդյոք լամպը շուռ չեն տա, կրակ չեն զցել, կամ մեկն ու մեկը չի հիվանդան: Թեև Մանուշը մեծ կնոջ պես տանտիենություն եր անում և տատի բացակայության ժամանակ յեղբայրներին մոր նման և՝ զուրդուրում եր և ապտակում ու ականջներից քաշելով խրատում, բայց Դաղարի տեղը չեր բռնի:

Եվան աղելի շատ հիշում եր ամուսնուն այն ժամանակ, յերբ մի փութ սիմինդը կամ դարին շալակած, առավատը վաղ, լույսը չբացված թոջիվանքի մատից իջնում եր Սաղը և այս կամ այն ջաղացի մոտ հերթ եր բռնում, վոր ազա ու տուն տանիւ: Պատանում և,

մինչև իրիկնապատճ նստում եր այնտեղ սպասում, մինչև հերթը իրեն կհասներ։ Դողդողալով տնցնում եր փայտե նեղ սանդխածն կամուրջով, մտնում եր ջաղացը, ինքը աղունը լցնում չանի մեջ, կանգնում կողքին, ալյուրը թիակով մեշոկը ածում։ Ապա վսոից գուխ ալբաթաթախ շալակում եր մեշոկը ու տնօտքնալով, քրատինք մատած բարձրոնում եր ո. Կարապետի յելը ու այնուղից ել յերկուտակված վեր յելնելով, գնում եր Խաջիվանքի յետելը, իրենց տուն։ Մեշոկը ուսից ցած զցելով, հոգնած-հոգնած թեթև խմոր եր անում ու մինչեւ խմորի վալը՝ մի յերկու հաց քուրայի վրա մեշտով յեփառմ եր ու յերեխաներին բաժանում։ Մանուշը նրան ողնում եր ջուր տալով, աման կամ սփռոց բերելով, կրակ անելով։ Ժորիկը խմորից բլիթներ եր շինում փոքրիկ, ճնճղա կտուցի նման քիթը խմորու ձեռներով սրբելով ու մանր տառաները զուրս զցած սվավալով։ Իսկ կոլան նվայի թեթև տակից կառ սուրփրի վրայից բարակ ու յերկար մատներով խմորը փախցնում բերանն էր կոխում։ Իսկ յերը կշատնում եր, ալյուրով ներկում եր իր յերեսն ու զլուխը, կամ խմորը քսում եր տատիկի յերեսին, ապա վախչում նրա ձեռքը չընկնելու և չդնքսվելու համար։

Ամեն անգամ, յերը նվան սիմինդը շալակած իջնում եր, կամ ալյուրը ուսին զրած բարձրանում, ճանապարհին բեռը ցած եր դնում, մաշված չթի դեյրայի փեշով սրբում իր նեղ, դուրս ընկած ճակատի ու սուր, յեռանկյունածն քթի վրայից հոսող քրատինքը ու իշում Դաղարին։

— Սե զար իս զլխին, Բնչ արի յես Հիմի ես տեղ լիներ Ղաղարը, յես ես որը կքաշեյի՛! — Ու ամե-

նից շատ նա բարկանում ու տանջվում եր այն մըտքից, վոր չեր իմանում, թե այդ բոլոր տառապանքների պատճառը մվ է, վոր ձեռը զցի կոկորդը, քրքրի նրան ու վերջն երեն եր գտնում հանցավոր:

Նրանց տունը կպած եր Առջիվանքի ողարսպին և ճակատով նայում եր Արսենալին: Մի փոքրիկ տուն եր, յերկու սենյակից բաղկացած, վոր ուստա Ղաղարը անփեսա զնալով Եվլայի մոր, այրի Թեթևանի մոտ, ժառանգել եր, ինքը, ուստա Ղաղարը, յերեսուն տարի տուջ կալատող Գասպարի հետ տունը նորոգել եր հիմնիվեր: Ինքը քար ու ցեխ եր առալիս, ջուր ու աղյուս եր առալիս, Գասպարը շարում ու ծեփում եր, վորի համար Ղաղարը նրան տվեց 10 ռուբլի և գործն ավարտելուց հետ մի լավ քեֆ սարքեց նրա պատվին, չորս մանեթ ու կես ծախսելով:

Կապլան մեծանալով, տունն ավելի կարգի դցեց: Հողե հատակները տախտակեց, բակը պարսպով պատեց և մի քանի ծառ տնկեց: Ցերք կապլոն ամուսնացավ, մի սենյակում ինքն եր ասլրում ընտանիքով, մյուսում Ղաղարն ու Եվլան: Կապլոյի զնալուց և հարսից հետո բոլորը տեղավորվեցին վորդու սենյակում, իսկ յետնի սենյակը դարձրին խոհանոց ու մառան: Տունը հնացել եր, խարխլվել, դուռը փողոցի կողմից ծովիլ ու գետին եր իջել այնպես վոր հաղիվ եր բացվում ու խփվում: իսկ դրսից կարծես գետնի մեջ խրված ցանկապատի՝ ներկը տված ու կնճռոտված տախտակը լիներ:

Մի որ, իրիկնապահին, Գորուց նոր վերադարձած, Եվլան մի քանի հատ խնձորի չիր ու մի-մի կըտոր հաց յերեխաներին տալով, լորին դրել եր կրա-

կին, ինքը նստել եր գուան առաջ, իրենց հարեան Սի-
կոյի մոր հետ, պատմում եր նրան իր ճանապարհոր-
դությունն ու զանգատվում կյանքից, Սիկոյի մայրը,
Սալոմեն, մի մանր դիմագծերով, ցամքած, բայց զե-
ղեցկությունը չկորցրած, խոշոր, արագաշարժ ու ոչ-
քերով վրացուհի, սիրո եր տալիս նրան գուլպա գոր-
ծելով.

— Աղջի, շատ ել միաք մի անի. Սիկոն ասում
է՝ եսպես չի մնա, — ասում ե, — շուտով բալշեիկոնը
կզան, աշխարհը կփոխվի, ես ծանր որերը կանցնեն:

— Ե՞ս, Բնչ անեմ, թե կզան: Ինձ Բնչ, թե կը-
զան. զան՝ ինձ համար մազն են բերելու. Դու տաս
իմանք զան:

— Մի ասի, Եվա Զան. վոր զան, լավ կլինի, Սի-
կոն ասում ե՝ իրանց սադ զավոդը նրանց և սպասում.
Քաղքի բոլոր բանվորներն ել, — ասում ե, — պատրաս-
տություն են տեսնում ես կառավարությունը զցելու,
նրանք վոր զան, աշխարհը շուռ կզա, եսպես չի մնա:
Աղքատ խալխի որը կլավանա:

— Բա, ասում են՝ մըթամ զրանք խալխին կո-
տորում, թալանում են, — ասաց Եվան տարակուսան-
քով:

— Ի՞... Ի՞... — վրա բերեց Սալոմեն ժպտալով,
— թալանն՝ թալանվողին թալանեն, քո Բնչը թա-
լանեն, կամ Բմ ինչը... Ասած ե՝ կովի մեջը քամար
ունեցողի քտմարը կթոցնեն, յափունջավորի յափուն-
ջին. տկլոր մարդուց Բնչը պիտի տանեն: Բանը թա-
լանի ընկնի՝ հալա մի քան ել քեզ կհասնի:

— Վերա, քոռանամ յես... Սալոմեն շան. ինձ հար-
կավոր չի. վոչ կոփի եմ ուզում, վոչ թալանից բա-

մին. հարամ ծեղը թող իմ տունը չմտնի: Ասա՞ կապ-
լոյիս փորձանք ռասա չդա, Ղաղարը սադ-սալամաթ
տուն զա, ել բան չեմ ուզում: Թե չե՞ հս ի՞նչ և իմ
կյանքը: Դիմեն երեկ ինչ որ եմ քաշել: Մի սադ ըս-
տանցիս, կարդինկեն ձեռիս, վազոնի դռնիցը մի ձե-
ռով կախ ընկած, սանդուխքի վրա կանգնած եմ յե-
կել: Ի՞իշ եր մնում վագոնի տակն ընկնեյի: Վոր միտո
և զալիս, թե եզուց մթնախառն պիտի գնամ ջաղացի
դռանը քուչի մեկել ծերին ոչերնդ կանգնեմ, սիրտս
խառնում, զլուխս պտտվում եւ Սահաթի իրեքին ել
ցած եմ իջնում, ելի զնա երկու-իրեք հարյուր մարդ,
կնի՛, երեխա մեշոկներով, խուրթիններով, տոպրակ-
ներով, դաստամալով, ազլուխով իրար վրա թափված
ոչերեդ են բռնել, վորը գարի, վորը սիմինդ, վորը ցո-
րեն, վորն ել հավի կուտ են բերում, թե աղան: Շա-
տըն իրեկունն ե գնում, ենտեղ ել քնում ե զետնի վը-
րա, բաց յերկնքի տակ, շատ անգամ անձրեի, ցեխի-
մեջ: Երեխնք ել մեծ չեն, թե հետո տանեմ, կամ
մեկն ու մեկին ուղարկեմ: Մանուշն ե մեծը. ազա-
լինչպես յես են երեխին կես գիշերով դուրս գցեմ, ան-
թե չե՞ նա ի՞նչ կըաշարի ջաղաց զնալ:

Նվայի սիրտը լցվեց, ուզում եր լաց լինել բայց
հանկարծ ջրակալած աչքերի առաջ, ինչպես մառա-
խուղի մեջ՝ պատկերացավ կապլոյի աներ խանջալսազ
Արտեմի կերպարանքը ծուռը վզով, վոր իրենց տան
կողմն եր գալիս: Դեռ Արտեմը նրանց չհասած, Սալո-
սեն փեշերը թափ տալով վեր կացավ, թելի կծիկը
դբեց թեկի տակ ու հառաչելով ասաց.

— Կանցնի, կանցնի, Եվա ջան, ոարդ մի անի,
սիրտդ մի բարակացնի:

A 3258

Ու շատով հեռացավ:

Արտեմը տուն մտավ, ձեռը տարավ արխալուղի գրպանը, ձախ ձեռով վեցի տակից զբոլանը բռնեց ու տղով ինչ-վոր մի բան փնտուելով զրտոնում, ասաց Եվային, մեծ հոնքերի տակից աչքերը զցելով իր դըրականին ու կարծես վոչ Եվայի, այլ իր զբանի հետ խռուելով.

— Աչք լուս, խնամի. Դադարն եկել եւ

— Ի՞նչ, վույ քի... ի՞նչ ես ասում, — աղաղակեց Եվան, ու ծնկները թուլացած՝ հաղբնի իրան դցեց թախտածե կապած տախտակների վրա.

Վորագինոն Արտեմն այդ լուրն այն յեղանակով եւ դեմքի այնպիսի արտահայտությամբ ասաց, վոր կարծես մանվան բոթ հազորդելով, մխիթարանքի խռոք եր ասում՝ «Ասաված ողորմի հոգաւու»:

Ու զգալով իր խռոքի տոնի ծանրությունը, Նայեց Եվային ու ավելացրեց.

— Հօ, ի՞նչ վախեցար. եկել եւ, ոուտ չեմ ասում:

— Բա մըր եւ, վոր եկել եւ

— Ա՛յ, ևստեղ եւ, ասաց Արտեմը, Նայելով դըրականին, կարծես Դադարը զրովանում լիներ, և ձեռը զրովանից զուրս քաշեց, մասների արանքում մի կեղռաւ ճմբթված թուղթ հանելով.

— Ա՛յ, թուղթ և դրկել.

— Բա ի՞նքը վորտեղ եւ

— Յիսեթումը, այ ես թղթի մեջ դրած եւ. Մանուշն մըր եւ. կարմ կարդա. կանչի թող կարդա.

Մանուշը, վոր մյուս սենյակում սիմինդ եր խռակում, նրանց ձայնի վրա ներս յեկավ, ներս վագեցին նաև մյուսները:

— Ապա, Մանուշ ջան, կարդա, ասաց Եվան,
վերցնելով՝ Արտեմից փոքրիկ, քառանկյունի մագա-
ղաթանման թուղթը, ծնկան վրա դնելով հարթեց,
նայեց մի յերեսին, ապա շուր տվեց մյուս յերեսը,
կարծես ուղելով հոտ քաշել ու մեկնեց թոռանք:

Մանուշը՝ թուխ դեմքը կարմրած, յերկար թիր-
թերաւնքների արանքում խլվացող կապատավուն աշ-
քերը թղթի վրա խաղացնելով, մատը բառերի տակ
սեղմելով, կռւթքը տալստակին դեմ տված սկսեց կըմ-
կըմացնել: Դնչի նուրբ աղվամազների ու քունքերի
վրա քրտնքի մանր կաթիլներ բանս Ծուռը տողերով
ու խառնիխռուռն տառերով գրած հիտեյալ խոսքնը
կարդաց Մանուշը:

«Շուտափ իմ պսակի թուղթը, կամ թաղա բաշ-
րորթ հանեք ուղարկեք ի քաղաքն Մցխեթ, միկիտան
Դիզոլի վրեն, Ղաղար Բաղդասարովին տալու համար:
Զուշացնեք»

Ռերիշ վոչինչ:

Եվան բան չասկացավ: Աչքերը լայն բացած,
առուցի գեմքով նայեց Արտեմին ու ինչ վոր բան եր
ուղում ասել. ըայց շըթունքները ծոռովնեցին, ու նա
աղլուխի տուառերը փոքրիկ բերանին դնելով, սկսեց.
Կարծես քառերը հրելով դեպի կոկորդը, վորանդից
խեղդվաղի խռպառ խռխռոց լսվեց:

Արտեմը նստեց ու սկսեց բացատրել, Ժորիկին
ու Կոլային մի-մի ռայանուշկի» տալով գրանից և
Մանուշը հետ դաւրս ուղարկելով:

— Ղաղարին ծիսթումը բռնել են, չնա թողում
գա քրտղաք, Ռեզում են Երեան ուղարկեն, ան յետ՝
Լագիկավկազ: Հալրաթ բաշրորթը կորցրած կլի, զրա

համար չեն թողում զա: Են կողմի ճամբարը հիմքի կապած ե, ոչովի չեն թողում դեսը անց կենա: Են կողմից եկաղին առում են՝ բալշեիկ ե, ան բալշեիկի թըդթեր և բերում հետը:

— Այ, հոգիմ զրանց զլուխը յիս, հա: — ասոց Եվան սրտալի ու չանչելով զեպի դուռը Նա Բնչ բալշեիկ ե, բալշեիկի թըդի հետ Բնչ գործ ունի: Ան նըրան Բնչ բաշրորթ և հարկավոր. սալզաթացու հո չի: Յես յերսունհինդ տարվա կնիկ եմ, մի որ չխմացա, վոր նրանից բաշրորթ հարցնեն:

— Ինչ վոր ե, հիմքի բանը հսղես ե, խնամիքարգուդ վուը ենտեղ, Ցխեթումը կապել են, ու մինչի եստեղի պոլիցիցը թուղթ հնանես, չղրկես, չեն թողի, վոր զա: Հալու կչարչարեն ել: Առաջօաը գնա պոլիցեն, կամիստարին խնդրվի, վոր մի թուղթ տա, թե Ղաղարը քաղքումը մեծացած, եստեղ պսակված, տուն ու անդի տեր մարդ ե, ու մշտական ապրել և քաղքումը ու գործով գնացել եր Փոթի: Խսկի մի տսի, թե ինչի համար եր գնացել: Թե կհարցնեն, ասա՞ չստեր եր տարել ծախելու, ան եղենց մի բան մողանի: Վոր իմանան տղեղ են կողմերումն ե, ու Ղաղարը նրա յետեիցն եր գնացել, վայ թե ուրիշ բան մտածեն ու չը թողեն զա:

IV

Ուստա Ղաղարն այստեղից այնտեղ անցնելով, յերկար թափառելուց հետո, ընկավ Ռոստով: Վաշ մի տեղ լուր չիմացավ Կապլոյի մասին: Միայն Ռոստովում պատահեց մի ծանոթ տաճկաստանցի բուլկի ծախողի, վոր նրան ասաց, թե նրա տղային ահսել եր:

բայց հիմա ոչժշար թե այդտեղ լինի, քանի վոր նա ըսուշեիկների զորքի հետ եր. հիմա նրանք Ռոստովից հեռու, մվ դիտե վորտեղ, կրիվ են անում. Ղազարն ավելորդ համարեց մնալ, վորովհետեւ այդ կողմերում թունդ կրիվներ եյին տեղի ունենում, քաղաքները մեկի ձեռքից մյուսին եյին անցնում. ինքն ել ապրեցու հնար չուներ: Նա վճռեց վերադառնալ: Մեծ նեղություններով անցավ Վլադիկավկազ, այնտեղից ել Դուշեթ և Դուշեթից մի քանի գաղթականների հետ վորով ճանապարհ ընկավ դեպի Թիֆլիս: Հայ-վրացական պատերազմը նոր եր վերջացնել Հայաստանում գաղճական կառավարությունը, Վրաստանում մնացած աշխատում եյին «ոտար» տարրերից թեթև վացնել յերկիրը: Յերկու տեղումն ել խիստ «ազգայնացումն» եր կատարվում: Մենչեւկների. ներքին գործերի մինիստը Ռամիշվիլին խիստ հրաման եր ավել, վոր թույլ չտառ ոտար ազգերին, մանավանդ ուուներին ու հայերին, Թիֆլիս մտնել: Խոկ յեթե կասկածելի վրացի յե գալիս, ձերբակալեն և անմիջապես ուղարկեն Թիֆլիս:

Ահա հենց այդ որերին Ղազարը հասավ Մցխեթ: Յերբ նա զնաց կայարան, վոր տոմսակ առնի, ասեցին, վոր առմսակ չեն տալիս մինչեւ կամենդանտից անցաթուղթ չներկայացնի: Նա իր ուղեկից գաղթականների հետ յերբ կայարանում մի մարդուց հարցնում եր կտմենդանտի տեղը, բերդանի հրացանն ուսին մի միլիցիոներ շտապ մոտեցավ նրան ու ընկերներին և ըարկացած հրամայեց «առաջ ընկնել»: Նըրանց տարան կայարանից հեռու մի ընդարձակ ցանկապատի մատ, գուռը քաց արին ու ներս առան: Բա-

կի մի կողմը, դեռնից քիչ բարձր մինարկանի տան հին, ճռճռացագ յերկատիճան սանզուխքից բարձրացան և մասն մի ընդարձակ, տախտակի խորդուրորդ, ցեխուս հատակով սենյակի, վորի մեջտեղը, մի հին սեպանի մոտ մի մարդ ինչ-վոր թղթեր եր ստուգում:

Յերբ հերթը Դադարին հասավ, նա ցույց ամեց Ռոստովից ստացած մի վկայական, վորի մեջ գրված եր նրա ձննդափայրը—Յերեանի նահանգի Հ. դյաւդը, վորակից ինքը և տարեկան հասակում իրենց ընտանիքի հետ անդախոխվել եր Թիֆլիս:

Դու ուրեմն Յերեանցի ես, — ասաց նրան սեղանի մոտ նստած մարդը, վոր ըստ յերեսույթին կամենդանտի գրադիրն եր, միաժամանակ և նրա ողնականը, վորովհետև վոչ միայն գրում եր ու նշանակում, այլ և կարգագրություններ եր անում:

— Վժրահեղից ես դալիս, — հարցրեց նա վկայականին նայելով:

— Լադիկավկագից, — ուղեց ստեղ Դադարը, մոռանալով, վոր վկայականը Ռոստովից եր ստացել:

— Սուսա ես ասում, ոխերո, Ռոստովից ես դալիս: Ելի վժրահեղ ես յեղել, բարկացավ գրադիրը:

— Զե, մասազ, ուրիշ տեղ չեմ յեղել:

Ի՞նչ եյիր շինում են կողմերը. բալշեիկների մոտ եյիր համապան, անզուկ ունեմ հետո. քանի վութ թուղթ ու թուուցիկ ես ըերել հետդ Թիֆլիսում բաժանելու համար. բալշեիկները լավ փող են ապիս համ, դրա համար:

— Ի՞նչեր ես ասում, այ մարդ. յես իմ ցավի համար եյի դնացել. ապրել չեր լինում, ասեցի՝ քնամ են կողմերը վոտի վրա առուտուր անեմ, կամ փեղակա

բանացնեմ. յես արհեստավոր ծեր մարդ եմ, թնչ գործ ունեմ զալմաղալի հետ:

— Եմկ, արհեստավոր ես, զնա քո յերկիրը, արհեստ բանացը ու նա ե, շուտով Թիֆլիսից հատուկ դնացք կդա, կգնաս քո յերկիրը:

— Այ մարդ աստծու, իմ յերկիրը Թիֆլիսն ե, յես ենտեղ մեծացել եմ, ամուսնացել տուն-տեղ, կին, յերեխա, թոռներ ունեմ ենտեղ:

— Դու Թիֆլիսի մարդ չես, Հայաստանցի յես, զնա քո Երևանը, կամ քո բաշենիկների մոտ՝ Մոսկովի կողմը:

Ել չուզեց լսել նրան, և յերբ Ղազարը վիզը ծըռած փորձեց նորից խնդրել, զրադիրը բարկացավ ու հրամայեց ամբողջ խումբը դուրս տանել ու խառնել մյուսներին:

Դուրս տարան նրանց: Ղազարն այստեղ նոր իմացավ, վոր մի քանի հարյուր հողի հավաքված կալանավորի վիճակումն են և սպասում են զնացքի, վոր նրանց պիտի Վրաստանի սահմաններից դուրս տաներ:

Հենց յերեք որ առաջ նոր խիստ հրաման եր ըստացվել ներքին գործերի մինիստրից, վորի մեջ ասված եր, թե իր հրահանգները ճիշտ և անթերի չեն կատարվում, և շատերը այս կամ այն ճանապարհով մտնում են Վրաստան: Խիստ հրամայվում եր, վոր այդ առթիվ յեղած հրահանգները ճշտորեն, տառացի կատարվեն, վորի համար անձնապես պատասխանատու յեն տեղերի բոլոր կառավարական ներկայացուցիչները—նահանգապետները, գավառապետները, շրջանային, գյուղա-

կան և այլն կամիսարները և մտնավանդ կամենսպանաները:

Դագարի ջանը զող ընկավ: Ի՞նչ աներ, յեթև ի-
քոք իրեն ուսպարկեցին ուրիշ տեղ: Տունը ով զիտե,
ինչ վիճակի մեջ և. Բնչպիս պիտի ապրեն առանց ի-
րեն. ինքը բնչ պիտի անի ուրիշ յերկրում: Սկզբուն
նբան անհավատալի յեր թվում թե այզպիսի բան կը-
կնի. չեր հավատամ թե կկատկածեն, վոր ինքը թիվ-
իսեցի յե, կամ իրավունք չեն տա թիվլիս մտնելու:
Չե վոր ամբողջ Հավլաբարը իրեն ճանաչում ե. պոլի-
ցիան ել զիտե. այնտեղի ծառայողներից շատերը
նույնիսկ իրեն ճանաչում են: Բայց յերբ յերկու որ
անցավ, և նա տեսավ, թե ինչքան մարդիկ են հավաք-
վել, ու նրանց հետ ինչպիս են վարվում, կատկածր
վերացավ: Դրանից հետո սկսեց մտածել մի հն որով
թիվլիս զնալու մասին:

Նրանց ուղղերին մոտ մի զինետուն կար, վոր-
տեղ թեյ ու ճաշ ել եյին աալիս: «Կալանավորներից»
շատերը այդտեղ եյին ճաշում, թեյ խմում: Միկիաանը
մի կարճանասակ, հաստլիկ, կարմրերես, շեկ մազերով,
զվարհախոս ու ժպտադեմ մարդ եր, Գիգոլի անունով:
Նա այդ շանթախտ հյուրերին կատակներով համեմած
ճաշ ու զինի յեր թափաղա անում, սիրտ եր աալիս,
վոր չտխրեն. միաժամանակ չեր զլանում խրատներ ու
խորհուրդներ տալ: Չիմող մարդն ել զնում եր Գիգո-
լու զուքանը, զինի գնում առաջը, նրանից մի խոր-
հուրդ հարցնելու, կամ մյուսների-իր վիճակակիցնե-
րի հետ խորհրդակցելու համար: Գիգոլին հին ծանոթ
գուրս յեկավ Հաղարին, վորը մի ժամանակ զինու
հետ բարեկամ եր:

Ահա այս Գիգոլու խորհրդով ուստա Ղազարը վճռեց նամակ ուղարկել կնոջը, վոր Թիֆլիս մտնելու արտօնաթուղթ վերցնի, ուղարկի:

Գիգոլին դախլի տակից մի հին, արդեն դեն գըցած գավթար հանեց, վորի վերջում մի յերկու թերթ մնացել եր չդրած, պատուց մի կտոր, մատիտը կոխեց բերանը, լեզվով լավ թրջեց ու դրեց վերոհիշյալ նամ կը: Հենց նույն որը, յերբ կոնդուկտոր Պետրե Քոր ձեն մտավ գինետուն յերկու բաժակ զինի խմելու, Դիգոլին ձեռը նրա ուսին խփելով ասաց.

— Պետրե ջան, ման ոլում, ես գիրը հետդ տար քաղաք, վասիերիչների շարքում հարցոււ խանչալսազ Արտեմին, կգտնես, իրան կտաս: Ու յերբ Պետրեն թուղթը խրեց գրպանը. Գիգոլին մի բաժակ ել լցըց ու թավաղա արավ:

Խնչպես տեսախնք, Պետրեն իր պարտքը կատարեց՝ հաջորդ որը նամակը հասցնելով Արտեմին:

V

Նամակն ստանալու մյուս որը Եվան չգնաց շաղաց: Առավատը վաղ մի ամանով սիմինդ դրեց քուրային, Մանուշին սլատվիրեց վոր մտիկ անի, մինչեւ իր գալը: Յեթե, բան ե, ինքն ուշանա, Մանուշը թող խաշած սիմինդի ջուրը քամի, ու սիմինդը տա յերեխեցին ուտելու. մի-մի կտոր ել հաց բաժանի:

Դեռ վաղ եր, յերբ Եվան հարցնելով մտավ միլիցիատուն: Յերկար պատշգամբում, խունացած շինելը հազին, ձեռքերը գրպանում մի միլիցիոներ նըստած տարուրեաին, մեծքը տված ճաղին նիրհում եր, յերբ Եվան բարձրացավ սանդուխքներով:

Միլիցիոները քնառ դեմքով, նիհար, գեղնավուն բրդու մորուքով, աչքերը ստուծ, միջին տարիքի մորդ եր, Նըա հարցին պատասխանեց անտարբեր, հորանջելու պատրաստ հայտցքով, թե՛ զեռ վաղ և կանցելյարը ժամը իննին կրացվի, իսկ կամիսարը 11-ից շուտ չի դա Եվան թերի ուն, խունացած շալը քաշեց դոշերին ու նստեց յերկար նստարանին, իրանիրան ինչ վոր մտմատլով:

Ժամը իննից պատշտամբը հետպետե կենդանանում եր, Գալիս Եյին զանտղան մարդիկ, մասայան կամ պայուսակ կանատակերին — միլիցիոներներ կամ ուրիշ պաշտանյաներ Ներս Եյին մանում, կամ զուրս զալիս: Գալիս Եյին կանայք կամ տղամարդիկ, հերթապահ միլիցիոներին ինչ-վոր բան Եյին հարցնում՝ վամանք յետ Եյին զնում, վամանք նստում Եյին Նըատարանին, վամանք ել ծիսելով կամ մասամունքի մեջ խորառուղիած, պատշտամբում յետ ու առաջ Եյին անում: Նստարանի վրա յերկար ու մեկ շարվեցին զանազան այցելուներ, գլխավորապես կանայք, շատերն ել նստարանի վրա տեղ չգտնելով, հատակին շարվեցին վոաները համաքած, իսկ ավելի համարձակները վոաները յերկար մեկնած:

Ժամը մեկն եր, յերբ Եվան մտավ միլիցիապետի կարինետը: Կամիսարը՝ լիք-լիք, կարմրավուն թուլ դեմքով, հաստ շրթունքներով ու բեխերով, քառակուսի յերկար սկ մորուքով մի մարդ, նստած եր թիկնաթուին, աջ թել հենած աթոռի բազկին, ձախ ձեռը սեղանին դրած, ինչ-վոր բացարություններ եր լըսում առաջը կանգնած մի խենջարավոր պաշտօնյալից:

Յերբ նա նայում եր այցելույին, աչ աչքը մի տեսակ խփվում ու բացվում եր, կարծես աչքով անելիս լիներ: Խենջարավորը դեռ դուրս չգնացած, մի միլիցիոներ ներս մտավ, ինչ-վոր զեկուցեց ու գուրացնաց և մի բոլեյից հետո ներս մտավ. յետեից բերելով մի չեչոտ, կարձահասակ մարդու և մի սաստիկ ջղային գիմազմեր ունեցող յերիտասարդի: Յերեսում եր՝ սրանք դեռ դրսի կափվը չեյին ավարտել. չեչոտը դողացող շրթունքներն ու քթածակերը լայնացրած փնչացնում եր, ինչպէս ծանր մենամարտից հետո ըմբիշը, իսկ յերիտասարդը յերկար կղակը դողացնելով անարյուն աչքերը խաղացնում եր՝ հարձակվելու պատրաստ կատվի հայրցքով:

— Դուք, ի՞նչ ե, չեք յենթարկվում որենքին,— ճշաց կամիսարը սուր ձայնով,— ի՞նչ ե. Ռուսաստանից կտրվեցինք, Սիրիրի ահը սրտներիցդ դուրս յեկավ, համ... Վրաստանն ել Սիրիր ունի, մի վախենաք, ենպես տեղ քշեմ, վոր Սիրիրին յերանի տաք:

— Աղա, ախր ինձ վրա ի՞նչի՞ յեն պրատակու կազմել, յիս մեղավոր չեմ. յիս իմ քաժինը տվել եմ, — ասաց չեչոտն աղաչական տոնով:

— Լավ, ձենդ կտրիր, — գոռաց կամիսարը տեղից թռչելով ու վոտը գետնին խփելով, հրամայեց միլիցիոներին. — Տար սրանց ծակը դցիր. մինչև չկարգադրեմ, չհանեք:

Միլիցիոներն անմիջապես յերկուսին ել դուրս տարավ բոթելով ու թույլ չտալով բարկությունից դողացող յերիտասարդին խոսելու:

— Դժւ ի՞նչ ես ուզում, — դարձավ հանկարծ միլիցիապետը խստաձայն, Եղային, վոր մի բոլես տեսող

այս տեսարանից սաստիկ սրդողած պլուխը կախ եր գցել ու կարծես զզջացել եր ներս գալուց:

— Մարդուս համար բաշբորթ եմ ուղում, ան մի թուղթ, — ասաց Եվան ցամաք ձայնով. — քո ցավը տանեմ, մի թուղթ տուր, վոր ծխեթիցը թողնեն զա, գնացել եր են կողմը, բաշբորթը կորցրել ե, չեն թողում քաղաք զա:

— Վեր կամիսարիատն ես ապրում:

— Հը, — հասկացավ հարցն Եվան ու տարակուսած նայեց կամիսարին:

— Տունդ վմբանդ ե. վորանդ ես ապրում:

— Եթոյի թաղումը. Հավլաբար. ցավդ տանեմ, ստված վորդիքդ պահի, մի թուղթ տուր.

— Գնա յոթերորդ կամիսարիատ, Հավլաբարի ռաւչաստկենա, ենտեղ թուղթ կտան, — ասավ կամիսարն ու մտավ կողքի սենյակը:

Եվան կարծեց, թե նա զնաց, վոր թուղթ դրել տա, կամ նման մի բան: Սպասեց, սպասեց, մինչև միլիցիոները նրան տաց.

— Ել մուր ես սպասում, չիմացմը կարդադրությունը. զե զնա ելի:

Եվան դուրս յելավ:

Մինչև տուն հասավ, ուշ եր. հարեան կանայք տասացին, վոր հիմի կամիսարիատում մեծերից վոչ վոք չի լինի. Յետաձգեց վաղվան:

Արտեմը յերեկոյան խրատում եր Եվային.

— Վոր զնում ես պոլիցա, ան կանցիլար, դեմուղեմ մեծի մոտը չպիտի գնաս. փոքրերից պիտի սկսես. փոքրին պատմի քո ցավը. հալա թե կարող

ես, մի բան ել խոստացի. ավելի լավ հ՝ հենց տեղուու տեղը բուռը կոխի:

Մյուս որը, առավոտյան ժամը 8-ին Եվան թաշկինակի ծայրը մի քանի «Գիգեչկորի» կապեց, դեյրայի զրապանը մի քիչ չիր լցրեց (զուցե պետք գար ինչպես խրատել եր Արտեմը) ու գնաց Հավլաբարի կամիսարիատը: Նա գիտեր, վոր դեռ վաղ ե, բայց շուտ գնաց, վոր «Փոքրերին» տեսնի, իր ցավը պատմի, մինչև «մեծին գալը»: Մինչև ժամի տասն սպասեց, վոր «Խնդիր գրողին» տեսնի, վորովհետեւ հերթապահն ասել եր.

— Եղան բանի համար խնդիր պիտի զրվի: առանց խնդրի, բան չի դուրս գա:

Մի քիչ հետո խնդիր զբողը յեկավ: Յերկար, բարակ բնիսնով, նիհար, վոսկրոս դեմքով ու մկան աչքերով մի մարդ եր, Նիկալայան շրջանի «պիսերներից», քթի վրա կարսիր բծերով:

Եվ ն կանգնեց նրա գիմացը, կուանալով սեղանին ու պատմեց մեկ-մեկ:

Գրագիրը ձախ ձեռը դրեց թշին, արմունկը սեղանին, մատների մեջ ծխախոտը ցցած, աչքերը խուփ լսեց նրան, ապա գրիչը վերցնելով, սկսեց գրել, տառերին յերկաս զարդարուն պոչեր ավելացնելով: Արկղը քաշեց, յերկու մարկա հանեց, մարկայի փողը Եվայից ստանալով գցեց արկղը, հրեց ներս, լեզվով ու լորձունուա շրթունքներով թրջեց մարկաները, կպցրեց թղթին, ապա շեղակի նայելով Եվային, հարցըն:

— Գրել գիտես:

— Վերտեղից զիտնամ, ցավդ տանեմ, — պատասխանեց Եվան թաշկինակի ծայրը արձակ ձեռի մեջ

սեղմելով: Գրադիրը կողքի մարդուն ստորագրել ավեց
և ամառն անզբաղիառաթյան խնդրատույթին, ծալեց թուղ-
թը, պարզեց Եվային, մյուս ձեռքի յերկու մատը
ցցած մեկնելով դեպի թաշկինակի ծայրը:

Եվան յերկու հատ «Գիղեչկորի» զրեց նրա առաջ
ու թուղթը վերցրեց:

— Մտիր եղ սենյակը, տուր սեղանի մոտ նըս-
տած տղին:

Եվան ներս մտավ, թուղթը ավեց ու կանգնեց:
Հերթապահը թուղթն ընդունելով, ասաց.

— Կարող ես գնալ:

Մյուս որը Եվան յեկավ պատասխանի: Յերկար
սպասեց: Ասացին, վոր պատասխանը պիտի ստունա
դիմավոր կամիսարիատից:

Մյուս որը Եվան գնաց դիմավոր կամիսարիատ
— այն տեղը, վորանդ յեղել եր առաջին որը:

Ասացին՝ Յերեք որից հետ արի:

Եվան տիսուր հառաչեց, բայց միաժամանակ
կարծես ուրախ յեղավ, վոր յերեք որ ողոլիցին յերես
չի տեսնելու, մյուս կողմից կկարողանա ջաղաց գնալ
ու յերեխաներին՝ կարգի զցել, ել Գորի, կամ Ամ-
արեղի գնալու մտուն չեր մտածում:

Յերեք որից հետ գնաց: Ասացին, վոր այդուհուի
թուղթ չի ստացվել: Նորէց գնաց Հավլաբարի բաժան-
մունքը. ստացին՝ վաղուց ուղարկել են:

Աեւ երորշ որը գնաց կամիսարիատ: Ուղնց մի-
լիցիապետին տեսնել. այնտեղ չեր. ոդնականին
ներկայացավ:

Ոգնականը ստատիկ բարկացավ ու ասաց, վոր
միլիցիան այդպիսի բաներում չի խառնվում, ուսար

անդից յեկողին մուտքի արտոնաթուղթ տալը միլի-
ցիայի գործը չե. պիտի զիմնէ «հատուկ ջոկատին»
(«սոսրի առըյաղին»):

Այդ որն ել կորավ:

Յերեկոյան Եվան զնաց Սալոմեյի մոտ, վոր Սի-
կոյին տսի՝ գուցե նա մի ճար անիւ Սալոմեն տխուր
ու անհանդիստ եր յերեւն: Յերը իմացավ Եվայի
պատմությունը, զոգովից սաստիկ ու դառն անեծք-
ներ թափեց միլիցիայի, «հատուկ ջոկատին» ու ամբողջ
կառավարության հասցեյին: Ապա քիչ հանդարտվելով,
պատմեց, վոր յերեք որ առաջ կես զիշերին յեկել Են
իրենց տունը խուղարկել, տակն ու վրա արել, ուզե-
ցել Են Սիկոյին տանելու Սիկոյի ընկեր բանվարներից
10 հոգու հենց զործարանում բանելիս ձերբակալել են
ու բանտ տարելու Լավ ե, վոր Սիկոն մի շարաթ առաջ
թագնվել եք:

— Հիմի նա՞ քաղաքումը չի, ասաց Սալոմեն
խորհրդավոր ձեռվ, բայց չասեց թե ուր և զնացել
Միայն խոսվածքից յերեւն եր, վոր իր յերկյուղն
այնքան ել մեծ չե: Խոստացավ Եվայի հետ զնալ:

Հաջորդ որը Եվան ու Սալոմեն հարց որ փորձով
իմացան տոսորի առըյաղի» տեղը ու բարձրացան Սո-
լուակի Վոլորվառույտ սանդուխքով վեր յելան. յե-
րեք գուռ կար. յերկուսը փակած, մեկը բաց. այս
ունով ներս մատն: Միջանցքում տարուրետի վրա
նստած եր մի յերիտասարդ՝ արյունոտ աչքերով, մառ-
դերը կողքից կախ: Մյուս կողմը մի մեծ սրան եր յե-
րեւն, վորտեղ փայտե բարձր ճաղերի յետեւմ իրար
մը թափթփված, պառկած կամ նստած եցին բան-

մաթիվ յերիտասատրդներ, զինվորական տարագով, միքանիսն ել քաղաքացիական զգեստով:

Սրանք գասալիքներ եյին, վորոնց զանազան կողմերից, թափուոցներից քաշել բերել եյին, իրենց զընդերն ու գարելու համար.

Հերթապահ յերիտասատրդն իմանալով, վոր ովեաին են ուղարկ տեսնել, ասաց.

— Եսոր ընդունելություն չունի, կարող ե պատահել՝ իրիկնապահին զա, թե կուղեք՝ իրիկնապահին յեկեք: Դարձան տուն և սպասեցին մինչև իրիկնապահ:

Իրիկնապահին զնացին: Հենց նոր պետը յեկել եր ինչ-վոր կարգադրություններ անելու և ինչպես յերեսում եր մաքուր ածելու դեմքի ու խոշոր, փայլուն տչքերի արտահայտությունից և՛ ուրախ եր և՛ բարկացած: — Այն վիճակի մեջ, յերբ մտրդ արամադիր և շտա խոսել, բարձր ձայնով, համ կատակել, համ հայեցիլ:

Առբճանակը կողքից կախ, աջ ձեռքի կարճ ու մսալից մասները զուրս ընկած փորի վրա, զոտին խրած, յերկու զինվորականի հետ խոսում եր տաքառայնայեռով դէղերակիրների կողմը:

Նվան ու Սալոմեն մոտեցան: Նվան զլուխը կախ դցեց, Սալոմեն լաշակի տուտերը քաշեց ու առաջ անցավ:

Գեաը զարմացավ, թե վմբակդից բան այս կանայք, ու բաս ձայնով հարցրեց.

— Ո՞վքեր եք. ի՞նչ եք շինում եսաեղ:

Սալոմեն ճզնելով ժպիտ բերել յերեսին, ասավ:

— Ճավդ տանեմ, խնդիր ունի ես պառազը:

Եվան սկսեց պատմել, Գետը լսում եր կարծես
անտարբեր, վորովհետեւ ուրիշ կողմ եր նայում. բայց
յերբ Եվան հասավ պատմության այն տեղին, թե իր
մարդուն ուզում են Յերևան ուղարկել, հանկարծ նա
ուրբար պրծած աչքերի վրայից կոպերը լայն բաց ա-
րավ, աչքերը չոնց նրա վրա ու գոռաց.

— Վոչ թե Յերևան, այլ եդտեսակներին պիտի
կտոր-կտոր անել, Թուոք ածել. թե չե՞ մինույն ե,
ուր ել ուղարկեն, ելի դալու յեն, մեր յերկիրն ապա-
կանեն. Դրանք բալշեիկի խոլերի բացիլներով թունա-
վորմած, ուզում են խոլերը Վրաստանի ջանը զցել:

— Ախր, ցավդ տանեմ...—վորձեց խոսել Եվան,

— Վոչ թե նրան, հայտ քեզ ել պիտի քշել ես-
տեղից, —ընդհատեց նրան «Նաչալնիկը» կատաղի ձայ-
նով. — բոլորիդ ել պիտի քշել — Ու շուռ գալով, միա-
ցավ իրանից հնոացած ընկերներին ու գնաց հակա-
ռակ կողմը:

Սալոմեն համարձակ մեջ ընկավ, նրա յետերից
զնալով:

— Ախր, ես նաչար կնկա բանը վժնց կլինի, Են
ձեր մարդը Բնչ գործ ունի բալշեիկների հետ. Գոր-
ծով քաղաքից զուրս եր գնացել, հիմի ուզում ե տուն
դառնաւ. Ըստանիթը սովից հո չի կոտորվելու Մի
թողթն Բնչ ե, մեծ բան ե. զրի, թող իրավունք
տան տուն գալու:

— Եդ իմ բանը չի, ասաց պետը, ուսի վրայից
բառերը շպրտելով նրան. Մինիստրի գործն ի հրաման
տալը. մինիստրի մոտ գնացեք. Ու ինքն շտագ հնոա-
ցավ:



Հերթաղաճը մոլորված Եվային ու Սալոմեյին զուռը ցույց ավեց ու համարյա հրելով, շտապեցրեց դեպի դուրս:

VI

Ալյուրի մեյդանում, յարմարկայում ու Հավլարի բազարներում մի հայտնի անձնավորություն կար:

Մի գեր, հաստավիզ, ուսած փորով մարդ, բարձր կեղառա փողպատով, ոյուրտուկով, կաշվի պուտիկելը պատավիկու չափ լիքը՝ կուան տակին, ամեն որ կտեսնելիք նրան այդ բազարներից մեկն ու մեկում:

Ցորեն եր ծախվում, յուղ կոմ համար գլխին կանդնած եր: Մեկ՝ ձեռը խրուժ եր ջվալը, ցորենը կամ զարին բանով վերցնում, ոփի վրա նայում եր. մեկ՝ մտաք կոխում եր յուղի ամանը, քերտնը տանում. մեկ՝ համը եր վերցնում ուսած շրթունքներով փչում թեք տակը, միսը տնտղելու, կամ մօթալն եր կծում համը տեսնելու...

Չեյիր իմանում՝ առնող և, ծախմդ և, միջնորդ և — ինչ մարդ և, ինչնվագում: Գյուղացիք նրա պարտիկելին ու համարձակ շարժումներին նայելով, հարծում եյին բազարների վիկակացունց և, քաշվում եյին նրանից: Բոլոր միլիցիոներները հին ծանոթ պատվավորի պես և յին վարվում հետք: Իսկ յերը բազարում տերտեր կամ սպեկուլյանա վաճառականներ եյին պատառում նրան, աշխույժ ու քաղցր մասլաւաթի եյին բռնվում հետը: Իր հետ խոսելիս՝ «Ձումշուր Մինայիշ» եյին ասում. իսկ նրա մասին խոսելիս՝ վոչ անուն և վոչ ազգանուն—կանչում եյին «արլակատ»:

Տարբերելու համար մյուս նման «արլակատներից» ժողովուրդն ասում եր՝ «Շեյթան բաղարի արլակատ»։ Հետո կը ճառ ձեռվ սկսեցին կանչիլ՝ «Շեյթան արլակատ»։

Ահա այս Շեյթան արլակատին Արտեմին ել եր ճանաչում էսելով Եվայի ու Սալոմեյի ոլատմությունը, Արտեմը խոստացավ բանը զլուխ քերել նրանց խոսկության ժամանակ հետպնդեմ մտքի առաջ պատկերացնելով Շեյթան արլակատի պերճախոս լեզուն ու կուան տակի պորտֆելը։

Արտեմին իջավ «Թուրքի մեյդանը», Զումշուղ Մինայիչի թերից քաշեց ու միասին մտան «աղաղվալը»։ Յերկու հատ «մեծ ճաճի» գցել աալուց յետո Արտեմը նրան պատմեց գործի եյությունը։ Հենց այդտեղ Զումշուղ Մինայիչը Փափսալով պորաժիկը բաց արավ, մի թունթ դուրս քաշեց, նշանակեց անուն ազգանունը, մի շարք տեղեկություններ, և քացախով սելյոդիկան ու պինդ յեփած ձվի պատառը բերանը դնելով, պատվիրեց մյուս որը գալ «ինդիրը» տանելու։

— Ենակես մի «աղուշենիա» գրեմ, վոր Ռամիշվիլին չե՞ ինքը Ժորդանիան ել եշ կտրած մայիլ մատ։

Հաջորդ որը Արտեմը ուրախ - ուրախ, ծալած թուրթը ձեռով ծոցումը բռնած բարձրանում եր Շիրաջխաննեն։

Եվան խնդրագիրը վիրցրած գնաց «մինխսարի մոտ»։ Ասացին՝ «Գալավինսկու կողմն են։ Ռպերային թատրոնի կողքին, Ռուսթավելու պողոտայից դեպի աջ մի փողոց մտավ և ձախ կողմի մեծ շինության դռան առաջ կանգնեց։ Այդ դռնով բազմաթիվ մարդիկ ներս եյին մտնում ու դուրս գալիս, կարծես այդ տու-

Նը հրդեն եր ընկել, կամ նշանավոր մարդ եր մեռել:
Դուրսը, դռան մոտ, սանդուխքների վրա և զերեի նեղ
միջանցքներում լիթը միլիցիոներներ եյին:

Եվային ներս թողինս Բարձրացավ վերև, հար-
ցրեց ներքին գործերի մինիսարի ոկանցիլարը, այս-
տեղից այնտեղ ցույց տալով, նրան ուղարկեցին մի
ընդարձակ սենյակ: Եվան ներս մտավ և չորս կողմը
նայելով շփոթվեց: Պատերի յերկարությամբ սեղան-
ներ եյին զրգած թղթերով ու զրքերով, սեղանների
շուրջը աղամարդիկ ու կանայք շարժած, զրում եյին
կամ խոսում: Յերկու տեղ չխչխկում եյին զրամե-
քնաններ: Այդ չխչխկոցները խառնված կիսաճայն ու
փսփսուկով յելնող խոսքերի հետ, մի ընդհանուր բաժր
ժիոր եյին կաղմում: Եվան մոտեցավ մի սեղանի,
թուղթը մեկնեց այնտեղ նստած աղջկան: Աղջիկը ձե-
ռով ցույց տվեց դիմացի սեղանը: Եվան մցուցավ,
թուղթը պարզեց. մի գեռատի, սիրունազեմ, նիհար ու
գունատ աղջիկ վերցրեց թուղթը, բաց աբավ, զրեց
բաց մատյանի կողքին ու նայելով թղթին, սկսեց զը-
րել մատյանի մեջ, հերթական համարը նշանակելով
խնդրագրի վրա:

Եվան լուռ սպասում եր:

— Կարող ես գնալ, ասաց աղջիկը, առանց նա-
յելու նրան:

— Բա մինիստերին չեմ տեսնելու, հարցը շը-
փոթված Եվան:

— Չե, ոմինիստերը ժամանակ չունի, ասաց ո-
րիորդը շեշտելով՝ ոմինիստերը՝ ի ավելորդ «եւն», և
նայելով նրան ու ժպտալով այնպես, ինչպես ուսու-

Եիչը կժպտար աշակերտի մանկական միամիւս հարցի վրա:

— Բա պատասխանը հիմի չի լինելու:

— Պատասխանի համար կդաս ուրբաթ որը,—
ասաց աղջիկը ու զբիչը վերցնելով, խորասուզվեց
մտայանի մեջ:

Եվան դռաց, զոր որիորդի զլուխը ել չի բարձ-
րանալու գավթարից, հոգոց հանեց ու շուռ յեկավ:

Սանզուխքներից իջնելիս հաշվում եր Եվան՝ «ի-
րենքարթի, չորեքշարթի, հինգշարթի, ուրբաթ... ես
չորս որ, եսոր ել հաշվենք հինգ որ... հինգ որ ել պի-
տի սպասենք... ի՞նչ ելավ ջրատար Դազարի հալը հի-
մի—սովից մեռմավ, ուղարկեցին ուրիշ տեղ, հիվան-
դացմավ... մվ դիտե՛... Ու հիշեց ամուսնու ասածը՝
«Եռւնը գնաց դաստրխանեն, թե վստ բերի, իր վոտը
կտրեցին»:

Ուրբաթ որը Եվան սանդուխքները բարձրանա-
լով, մտավ գրասենյակը՝ և դեմուդեմ գնաց ծանոթ
աղջկա մոտ:

— Քո խնդրի պատասխանը կստանաս Ա Յ Յ մեն-
յակում, — ասաց նրան որիորդը և նկատելով, զոր նա
չհասկացավ իր ասածը, մի թղթի կտորի վրա զրեց
այդ համարը, ապա մի ուրիշ թղթի վրա՝ նշանակելով
խնդրագրի Ա-ը, ավեց նրան ու խրատեց. — այստեղից
վոր դուրս գաս, կծռվես դեպի ձախ, մինչև կարիդորի
վերջը կզնաս, ես նոմերը ցույց կտաս ենտեղ կանգ-
նած տղային, ներս կմտնես ու ես մյուս թուղթը կը-
տաս ենտեղ նստած աղջկան:

Եվան այդպես ել արավ: Մտավ մի փոքրիկ սեն-
յակ, վորաեղ յերկու սեղան կար: Սեղաններից մեկի

մոտ նստած եր դեղձան զանգուրներով, յերեսն ալյուրուտ, շրթունքները ալ վարդի նման մի աղջիկ։ Թուղթը մեկնեց նրան։ Աղջիկը վերցրեց, նայեց, առա առաջն տծած թղթերի կույտը խառնելով ու անտղելով, ասաց.

— Քո թղթի պատասխանը դեռ չկա։

— Ապա յերբ կլինի, յեռ քո անունին մեռնեմ, ախր հոգիս գուրս եկավ դնալ-զալով։ Ես հինգ որ ե՞ թուղթը ավել եմ։

— Մի յերեք որից հետո արին

Եեյթան արլակատից խորհուրդ հարցնելով, Արաեմը Եվային ասաց, վոր եղ խնդիրը հնապիսի խնդիր չե, վոր անպատճախան մնա. համար կարող ե ուշանալ։ Ետապեցնելու համար լավ կլինի, վոր Եվան դնա «Սահմանադիր ժողովի» անդամ Տեր-Բարսեղովի մոտ, ինդրի՝ վոր նա մինիստրի հետ խոսի։

Ուրիշ ճար չկար. Եվան այդ ել արավ։ Մամա Դավթի առկ, մի յերկար փողոցի վրա մի մեծ բակով տանն եր ապրում սահմանադիր ժողովի-անդամ Տեր-Բարսեղովը։

Հիսուն տարիկանի մոտ, յերկար մորուքով, բարսկ գիմազծերով, աերտերի հայացքով մի մարդ եր Տեր-Բարսեղովը։

Առավոտյան թեյն եր խմում, յերբ նրան իրաց տվին, վոր մի կին թալսանձագին խնդրում և ներկայանալ նրան։

Զհամարելով պաշտոնական այցելություն, նա թույլ տվեց, վոր Եվային ներս կանչեն։

Յերբ Եվան դրան մոտ, աթոռի ծայրին թեթև նստած պատմում եր նրան իր զլիսին յեկածը, Տեր-

Բարսեղովի անտարբեր դիմագծնը հավաքվում եյին
ու փոքրիկ կնճիռներ կազմում:

Հոգեբանը դուցե կարողանար կարդալ նրա յե-
րեսին հավաքվող կնճիռների մեջ այն հարցը, թե՝
ո՞յլո՞յ նյութի մասին մինիստր Ռամիշվիլու հետ խո-
սելն իր ապագայի համար լմվ թե վճար հետևանք
կունենար: Հիրավի, նա այդ կնոջը լսում եր, կար-
ծես առանց հասկանալու նրա ասածներն ու մտածում
եր այն մասին, թե Սահմանադիր ժրդովի անդամու-
թյունն իրեն թնչալիսի արառնություն ե տվել ու հար-
մարություններ ստեղծել փարթամ ու հանգիստ կյանք
վարելու, և թե վերքան դժվար կլիներ ապրուստը,
յեթե ինքը զրկվեր Սահմանադիր ժրդովի անդամի
բարձր կոչումից ու մանավանդ բարձր ռոճիկից և պա-
րապեր ուսուցչությամբ կամ հաշվապահությամբ, ինչ-
պես առաջ եր...

— Լավ, յես կխոսեմ,—ասաց նա, թեյի բաժա-
կը ցած դնելով ու վոտի յելնելով, կարծես հասկացնել
ուզելով պառավին, թե ժամանակ ե դուրս գնալու:

— Թու ցավը տանեմ,—ուզեց մի քանի խոսք ել
տաել եվան, բայց նա թույլ չտվեց.

— Լավ, լավ, հասկացա, գեղի ջան, միամիտ
կաց. կաշխատեմ. այս յերկու որը ժրդով ենք ունե-
նալու, մինիստրին կտեսնեմ...—Ու դուռը բաց արակ
Եվայի առաջ, քաղաքավարի ու ժպտալից:

«Այ ձեր քոքը կտրվի, թե դուք մարդ եք ու
խալիս եք կառավարում Համ...» Մտածում եր Եվան զա-
ռիվայր փողոցի խորդուրորդ մայթով իջնելիս:

Յերեք որ անց Եվան գնաց. բայց ելի պատաս-
խան չկար: Ել Սալոմեյին չեր խնդրում հետը գալու,

կամ իրեն ողնելու, վորովհեան Սալոսին ստոտիկ հուզ-
ված եր ու մտասանջ. վերջին որերը մի քանի ան-
գոմ յեկել եյին Սիկոյին պահանջել և սպառնացել
եյին, վոր յեթե Սիկոն կամսվին ոլուս աշխարհ չը-
դու, կղանհն՝ կկախեն, իսկ պառավին բանտում կը-
փակցնեն: Եվան մենատկ սկսեց ամեն որ զնալ զբա-
սենյակ. նույնիսկ որ յեղափ, վոր յերկու անգամ մը-
տակ ու հարցրեց զեղնամաղ աղջկոն: Այդ աղջկեն
արգեն նրան ճանաչում եր. հենց վոր նա ներս եր
մանում, որիորպէ ձեռը բարձրացնում եր ու նշան ա-
նում, վոր չկա:

Ութերորդ որը, յերբ Եվան ներս մտավ ուսպա-
սում եր, վոր աղջկա ձեսի սովորական շարժումը կը-
տեսնի, զարմացափ, վորովհեան սրբորդն իր սիրուն,
խոժ ոչքերը զցեց նրա վրա ու ձեռը տարափ դեպի
թղթերը: Եվան ուրբախ-ուրախ մոռնցալ:

Դրազգրուհին բաց արակ Եվային ճանով խնդրա-
զիրը, ինչ-վոր բան զրեց տուաշը զրած մեծ մատյանի-
մեջ ու գարձափ նրան:

- Անունդ կարձագ ես զրել,
- Զե, ցավիդ ատնեմ:
- Դե զրսից մի մարդ կանչի:

Եվան դուրս յեկավ ու հենց զսան մոտ կանգնած-
մի յերիտասարդի կանչնց, վորը ներս մտավ ու մտ-
այանի մեջ ստորագրեց թղթի ստացման մասին:

— Առ քո թուղթը: Այ, մինիստրն ի՞նչ է զրել
խնդրազրի վրա.—ասաց նա ցույց տալով թղթի վե-
րեի ձախ անկյունում մակագրությունը:

- Շահո շտջան — (Ռւարի եթքվաս)
- Այսինքն՝ «Մերժել»:

Մի սև ամպ կարծես յեկավ ու ծածկեց նվայի աչքերը... Նրա սիրտն սկսեց թփթփալ ինչպես մի գիք սար արտղ բարձրանալուց հետո. կողքերում ծակոց, ստամֆսի մեջ այրոցներ զգաց. գլուխը ծանրացավ ու տաքացավ...

Չիմացավ ինչպես իջավ սանդուխտներով, ինչպես անցավ թուաթավիլու պողոտան, Մուխրանյան կտմուրջն ու Ս. Կտրապետի յելը. Այդ յելի գլխին, զորանոցների մոտ միայն զգաց, վոր ծնկները ծալվում էն, դժվարանում և առաջ գնալ. Զորանոցի պատի մոտ, ջրի խողովակի տակ դրած մեծ քարի վրա նըստեց ու թուղթը թաշկինակի մեջ ամուր փաթաթած ծոցը խրեց, կարծես սրտի վրա ամուր պահելու և չըկորցնելու համար. ապա դեյրի փեշը աչքերին տանելով, սկսեց ծեծված յերեխայի նման հոնգուր-հոնգուր լաց լինել.

«Ուր գնա. Ի՞նչ ասի յերեխաներին. Ի՞նչ և սրանից հետո իր կյանքը ինչի՞ համար ապրի, ինչի՞ համար պահի թոռներին, տանջանքներով մեծացնի. Զեվսի նրանք ել պիտի պոլիցիայի, «ոսորի ատրյաղի», «սև ժողովի» անդամների ու մինիստրի ստրուկները լինեն, մատների մատմատոցով Գարոների խանութներըն ու տները լցնեն... Արժե դրա համար ապրել ու ապրեցնելի Զդառնամ արդյոք յետ, այդ թանկապին թուղթը ծոցումը, Մուխրանի կամուրջից իրեն ցած նետիւ:

Քորի մտապատկերը քաշում եր նրան, ինչպես ոճի թովչանքից կծկված ճագարին, վոր նրա բերտանն և մտնում աչքերը խփելով:

Բայց հանկարծ թռոները պատկերացան նրա առաջ, ինչպես ձնճղուկի ձաղերը, յերիզավոր կառւցները բաց, լեզուները դուրս, ճշճվալիս, Պիտի նրանց տեսնել. ևս քսան որից ավելի յե, խեղճերը անտերանախրական, սոված ու ծարով մնացել են. Թե վոր Ստլամեն ու Արտեմի ել չլինեյին. հիմի նրանք վագուց մեռած կլինեյին:

Եվան վեր կացավ ու տուն շատապնց:

Զարդված սրտով յերը դուռը բաց արավ ու ներս մտավ, տղշանքից քիչ մնաց վայր ընկները. Աչքերը կկոչելով, ապա արագ բաց ու խուփ անելով, դիտեց տարակուսած և մի բառ միայն կարողացավ բերնից թոցնել.

— Վույ քա...

Այնտեղ, Մանուշի ու Ժորիկի մեջ տեղը, վորիկ կոլային գողի մեջ յերկու ձեռքով խոտած, նըստած եր կուղը դուրս դցած ուստա Դաղարը՝ մաղակած, ցամաք, աանջված դեմքով, վորի վրա սակայն խոր ընկած աչքերը մի աեսակ ուրախության ու յերշանկության վայլ եյին արձակում:

Եվան ու շքի յեկած, շալը դեն զցեց ու վրա վագեց աղաղակելով.

— Այ մարդ, դու եստեղ թնչ ես շինում. թնչպիս եկար. յես եստեղ մեռա տանջվելով. չե՞ վոր մինիստերը ուռարի եթքվան ասեց, դու վժնց քաղաք մտար:

— Վժնց եկմ... ասավ Դաղարը, բռունցքով բեխերը զրստելով ու շրթունքների մեջ առնելով կոլայի ամբողջ թուղը:

— Խաղալով եկա, մինիստերի վագոնով եկա.... Կանդուկտոր Պետրեն թագուն բերեց. յես նըս-

հոգուն մատազ, Մացրեց զագոն, իր փոքրիկ կուպեյի դուռը կողակեց վրես ու ասավ: «Նստի, թե վոր քեզ զտննեն ևստեղ մամիշվիլու թազիներն ու բերդը զցեն, ինձ ել թող կախեն. նրանց թոկից վախեցող չկա. յիս դրանց գեղի սուդն անիծեմ...»

VII

Անցավ մի քանի ամիս: Ղաղարն սկզբում վախվը խելով, բայց հետո ավելի համարձակ տանից դուրս եր գալիս, աշխատում եր Ելայի հետ տան ցավը հոգաւ, հույս չունենալով, թե վորդուն յերբեն կտեսնի:

Մի որ Ղաղարը տուն յեկավ մտառու գեմքով, շալվարի դրողանից հանեց հին, մաշված պորտանը, բայց արավ և այնտեղից խնամքով ծալած մի թուղթ դուրս բերեց ու Մանուշին կանչելով ասավ.

— Ապա, կարդա, Մանուշ ջան, մի սիրտս հովանա:

Մանուշը թուղթը դրեց ճոճուացող տարուրետին, ձեռով լավ հարթեց ու քիթը համարյա կպցրած թըղթին, մատը տողերի տակ տանելով, սկսեց կարդալ. մեջն մեջ բառեր թողնելով.

«...Ժա...մա...նակը հասել ե, բան...վորն ու դյու...ղացին վոտի կանգնելով կխոր...խոր-տակեն թավադների ու կապ...ի.տա...լիս...տ.ների լուծե...»

Ու յերբ հասավ այնտեղին, վորտեղ ասված եր «կըկորչեն նրանց հավատարիմ շները», կանգ առավ շունչ հավաքելու, ձախ մատներով աչքերը արորեց ու կմկնացրեց «...մեն... մեն... մենշ...»:

— Մենշեիկները, վրա բերեց Ղաղարը, փղձկա-

լով աղլուխը աչքերին տարավ ու ավելացրեց սրտալի թավ ձայնով.

— Կկորչեն ժողովրդին ծվատող շները, աղքատ խալիքը կաղատի դժոխքից.

1921 թվի փետրվարի 24-ին, լույս 25-ի գիշերը Թիֆլիսում խորհրդավոր զործողություններ եյին կատարվում:

Յերկինքը մեծ փաթիլներով ձյուն եր թափում յերկրի վրա ու Թիֆլիսի տներն ու փողոցները ծածկում հասա շերտով: Քաղաքից ավտոները, կառքերը, Փուրզոններն ու սայլերը պոնկեպունկ լցված շտապում եյին կայարան: Դնացքները ծանր բեռնավորված թանկագին կատրներով, վոսկեղենով, արծաթե անոթներով ու Շնչանավոր մարդկանցով —... հելլով ու փնչացնելով, լույսերը մարած, սոզում եյին զեղի արևմաւաք...

Քաղաքի փողոցներում հաղիվ պլուացող լապաերների տակ պատերին ու սյուներին աշակերտներն ու աշակերտունիները թռուցիկներ եյին փակցնում: Լքած զորանոցները, ցեյխառուզներն ու մթերանոցները կողոպավում եյին տկլոր ու քաղցած տմբոխի ձեռքով: Զինվորական պահակներն ու միլիցիոններները զենքերը թափթփած աճապարում եյին իրենց աները: Փողոցները լցվում եյին զինված բանվորներով, արհեստավորներով ու ուստանողներով: Իսկ արևելքից ու հարավից թնդանոթների ձայնը ավելի մոտենում եր:

Փետրվարի 25-ի առավոտը լույսի հետ լույսի նման մի համբավ եր թռչում թե առած փողոցե-փողոց, անե-տուն: —

— Մենշեիկները փախել են, բանվորների ու գյուղացիների զորքը բոլշևիկների դեկավարությամբ մտնում ե քաղաքք...

Ամբողջ քաղաքը դուրս եր յեկել դիմավորելու և թամաշայի, կարմիր բանակը հրացանակիր բանվորների հետ կարմիր դրոշակներով, յերաժշտության թնդալից հնչյունների տակ քաղաք եր մտնում։ Բազմությունը ծափերով ու ովացիաներով դիմավորում եր նրան։

Նվան Սալոմեյի հետ յերեխաների ձեռքը բռնած դուրս եր յեկել դիմավորելու, կախեթյան հրապարակի մոտ մի փողոցի անկյունում տեղ գրավելով։

Յեղանակը պայծառ եր, բազմության տրամադրությունը տոնական. բազմության մեջ սպավորի սըրտով ու կասկածոտ աչքերով նայում եյին արշավող գնդերին վաճառականները, բանկիրները և ամեն աեսակ արտօնյալները։

Նվան ու Սալոմեն ուշադիր հայացքով նայում եյին մեկը մյուսին հաջորդող զորասյուներին։ Հանկարծ Սալոմեն սիրթնած դեմքով, աչքերը լայն բացած ինչ-վոր աղաղակեց ու կանգնածներին բոթբթելով, մայթի յերկարությամբ սկսեց վաղել ընթացող զորասյունին զուղղնթաց։


Նվան շփոթվեց Նայեց Սալոմեյի յետեկց և ապա հայացքը դարձնելով դեպի արշավող զորասյունը, դողդողաց ու քիչ մնաց վայր ընկներ։


— Վայ, յես քու ցավը տանեմ... — ասաց նուկերկերուն ձայնով ու կարծես պատրաստվում եր թըսչել դեպի անցնող արտիլերիական վաշտը...

Այնտեղ, ձի հեծած, թնդանոթի առջևից ընթա-
նում եր Սիկոն իրանը զիք բռնած, բարձր հայաց-
քով, թուրը կողքից կախ: Իսկ զինամթերքի արկղի
վրա նստած եր կապլոն, շինելը հաղին, թուրը կա-
պած, հպարտ հայացքը աջ ու ձախ նետելով...

Վրաստանի համար նոր կյանք եր բացվում...

Եվայի ու Սալոմեյի համար նոր որ եր լուսա-
նում:





B. C. Corp.
1956
Am. No. 632

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0043159

12

(2н.)

ԳԻԱԸ
50
ԿՈՊ.

ՅԵ

12

Արմ.

2-33242



МАРГАР
ОТКАЗ

На армянском языке

ИЗД. ГАЗ. „ПРОЛЕТАР.”